Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-23/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22 | 13 մարտի 2023թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Ղարիբյանը, անդամներ՝ Լիլիթ Երեմյանը, Գայանե Ավետիսյանը, Աստղիկ Հակոբջանյանը, Լուսինե Հովհաննիսյանը և քարտուղար՝ Հայկ Կոշեցյանը:

Օրակարգ

Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

ՀԾԿՀ-23/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Ղարիբյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցման պատասխանները ստացվել են, որոնցում մասնավորապես ասվում է, որ. «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող իրավաբանական անձ է, որն իրավունք ունի մատուցելու աուդիտորական ծառայություններ:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում, որը հրապարակված է մասնագիտացված կառույցի պաշտոնական ինտերնետային կայքում հետևյալ հղումով՝ https://caaa.am/reestr/auditorakan-kazmakerputhyun/: «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի վերաբերյալ տվյալները բացակայում են հիշյալ ռեեստրում»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հանձնաժողովը նաև արձանագրեց, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը քննարկեց որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Մեսրոպ Ղարիբյան

անդամներ _____ Լիլիթ Երեմյան

_____ Գայանե Ավետիսյան

_____ Աստղիկ Հակոբջանյան

_____ Լուսինե Հովհաննիսյան